

Անյուշ-յիշատակ ցամաքին գերգ ջուր։  
 Ո՞վ արդեօք այդ խեղճ զոհերին համար,  
 Երկընքին առջեւ տայ պիտի համար.  
 Ո՞վ Աստուծոյն սուրբ պատկերին պատիւ,  
 Նորան ցաւերը՝ վրշտերը անթիւ,  
 Պաշտպանէ պիտի ըսփոփէ սիրով  
 Վառւած՝ բորբոքած երկնային հըրով...  
 Ո՞վ մարդկութիւնն անկումից այս նոր  
 Ազատէ պիտի ձեռքերով հըզօր....  
 Այսո՛, Նոր մարդը այս նոր անկումից  
 Կարող է վերկել այն պլատովն անբիծ,  
 Որն որ Գողգոթին բարձըր գագաթում  
 Զոր փայտին վերայ միայն է ծընւում...  
 Պըտուղն այն Մէրն է արեամբ ոռոգւած  
 Որ մեղի համար մըշակեց Աստուած....

ՅԱՅԻՆ, ԱՅՏՈՒՆԱՆ ՆԱՐԱԴԵԱՆ

## ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԻՃԵՒԱՆՈՒ

### ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Տես յէջ. 220)

ԽԱՇԱՏԱՏՈՒԹԻՒՆ, ՄԵՂՈՒԱՌՄԱՆՈՒԹԻՒՆ, ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԵՒ ՔԱՀԱԲՈՒԹՈՒԹԻՒՆ

**Ս**ԱՄԵՆէն լաւ ոչխարները Որդուատու վիճակի մէջ կը դար-  
 մանեն. իսկ Դարալաղը նշանաւոր է գլխաւորապէս խոշոր ա-  
 նասուններով և իւր ձիերով, յորոց վերջիններս ոչ թէ ջոկերով,  
 այլ երկ երկու կամ երեք երեք կը պահեն. ձիերու հարստու-  
 թեամբ նշանաւոր է Դարալաղը Ճուկ գիւղն. Ծնդհանրապէս  
 գոմէններ ու մատակներ Նախիջեւանու վիճակի զնատագոյն տե-  
 ղեաց մէջ կը պահեն. ուր լաւ գոմէշ մի՛ մազանդարան անուա-  
 նեալ ցեղէն, (որ յայլոց կ'որոշի ճակտին վրայ ունեցած գրեթէ  
 եռանկիւնի սպիտակ նիշովն և ոտից ստորին մասանց և պոշին

կիսուն սպիտակութեամբն), 70-150 րուբլի կ'արժէ: Եզ մի կը վաճառուի 15-30 րուբլի, խոյ և ոչխար 3-5 րբ. իսկ այծ 2-3 րբ. կ'արժեն: Լաւ էշ մի 20-25 րբ. կը ծախուի, իսկ սովորական փափր յաւանակ՝ 6-12 րուբլի: Որդուատու վիճակին մէջ ջորի շատ կայ, որ թէ բեռները փոխադրելու և թէ հեծնալու կը գործածեն: ջորին ուժով ձիոյ մի հաւասար է և անկէ շատ աւելի դիմացկուն, և 50-300 րբ. կրնայ արժել: Ուղտերը միայն հետեւեալ երեք գիւղերու մէջ կը պահեն՝ Եայծախ (Որդ. վիճակ), Դիւգլուն-դիզէ և Նէգրամ: Հօս մեծաւ մասամբ միակուղ ուղտերը կը պահն, իսկ երկկուզները (Ասար) ընդհանրապէս խիստ ցանցառ կը հանդիպին, որովհետեւ ասոնք տեղոյս ձմեռներուն չեն կրնար դիմանալ: 1873 տարւոյն խոշոր ու փոքր անաօնոց թիւն՝ այս գաւառիս մէջ՝ էր 347,592, յուրոց 184,724 լ չայոց էր, 135,344 լ թաթարաց և 557 լ Ռուսաց (մարկանաց): Այդ համագումար թուէն՝ 273,673 լ փոքր էր, իսկ 43,919 լ խոշոր: Բաց ասկէ 840 գոմէշ ու մատակար, 8,976 ձի, 4,926 էշ, 291 ջորի և 296 ուղտ:

Հիմայ հաշուենք հօս երկու հարիւր ոչխարաց հօտէ մի՝ տարուան մէջ միջին հաշուով ստացուած բերքը: Ոչխարաց այդշափ հօտ մի գրեթէ տարին 20 պուդ եղ կու տայ կամ 100 պ. պանիր և 15 պ. բուրդ, իւրաքանչիւրին վրայէն Յ փունտ համարելով: Այդ եղին պուդը 5 րբ. դնելով և բուրդինը՝ Յ րբ. բովանդակ մուտքն կը լինի 145 բուրլի: Եթէ այդ գումարէն հանենք եղած ծախքը, ինչպէս՝ 40 րբ. հովիւ վարձելու, 10 րբ. աշխատաւոր կանանց համար և 15 րբ. մանր ծախք, այն ատեն երկու հարիւր գլուխ ոչխարէն՝ 80 րբ. զուտ շահ կը մնայ:

Խանադարմանութեան գլխաւոր բերքերն են բուրդ, եղ, պանիր՝ բազմատեսակ, կաթ և մածուն: Տեղացի ոչխարաց բուրդը շատ թանձր է և պուդը 3-4½ բուրլի կը վաճառուի. ուստի այս երեք վիճակացն մէջ ընդամէնն իրը 20,000 պ. բուրդ կու գայ, գրեթէ 60,000 բուրլի մուտք բերելով: Այդ եթէ բուրդը ստացուած բուրդին կէսը տեղական պիտոյից համար սպառի, հետեւարար կրնանք ըսել թէ այս վիճակներէս տարուէ տարի 10,000 պ. բուրդ գումար կը տարուի ծախելու՝ Յ0,000, բուրդի արժեքով:

Այնէնէն ընտիր պանիրը կը գտնուի Դարալաղըքի մէջ, որ իւր եղովն ու պանրով գրեթէ երեւանու գաւառին կէսը կը կերակը: Եղը՝ սերուցք կամ հում կոչուած՝ թթուած ու թանձրացած կաթէն կը հանեն, այսու գործողութեամբ. կ'առնուն սե-

բուցքը և կը լեցընեն փայտեայ դլանակերպ կամ քառակուսի անօթի (որ յատկապէս իւնոցի կամ ցցում՝ կ'ըսուի), և կամ պարզ տիկի մի մէջ, սակաւ քանակութեամբ տաք ջրով, և ապա բարձր եռոտանւոյ մի վրային կամ տան առիքէն կախելով կը սկսին հարել, մինչև որ իւղային թանձը մասը բոլոր երեսը ժողուի: — իսկ երբ եղլ մածունէն պիտի հանեն, (այն եւս սակաւ քանակութեամբ), այն ժամանակ գործը կաւէ փոքր խնոցեաց մէջ կը կատարեն: — Յետ կաթը լնդելու և եղը բաժնելով կարասի մի մէջ անցընելու, մնացած ջրախառն շիճուկին, որ սովորաբար բան կը կոչուի՝ Չոր-բան և Ժամիկ կը պատրաստեն, հետեւեալ կերպով: Կ'առնուն շիճուկը և կաւեղին անօթոց մէջ լեցընելով՝ կը սկսին վառարանի վրայ տաքցընել, որով մէջը գտնուած բոլոր պանրային մասերն կը մակարդին: Յետոյ այդ մակարդն երկու ափերու մէջ սեղմելով խնձորի մեծութեամբ կը գնտակներու կը վերածեն և կը չորցընեն, այս կը լինի չորթան. ուսկից ձմեռը ապուր կամ սպաս անուամբ թանձը կերակուր մի կը պատրաստեն: իսկ ժամիկը՝ նմանապէս մակարդեալ շիճուկին պատրաստուած թեթեւ կամ վոխտ պանիր մ'է. զոր շիճուկու ատեն մէջը այլեւայլ համեմիշ խոտեր կը խառնեն, և կաւէ ամաններու մէջ դրած՝ հողի տակ կը թաղեն, ուր երեք չորս ամսէն բոլորովին կը հասնի և կը նայ ուսուիլ: Դարալազըզի պանիրը երկար շիպահուիր՝ բայց լաւ համով է, մանաւանդ կորատիս գիւղինը. այն գիւղէս՝ Դարալազըզին դուրս կը տարուի 600 կճուճ<sup>(\*)</sup> պանիր, իւրաքանչիւրի մէջ դրեթէ 8 փունտ բովանդակելով, գրեթէ 700 բուրլի արժեքով:

Պանիր պատրաստելու համար նախ հետեւեալ բաղադրութիւնը կ'ընեն, (որ իրը մակարդիշ միջոց կը ծառայէ և տեղացիք պանիրի դեղ կ'անուանեն): Կ'առնուն գառան կամ որ և է ուտելի կենդանեաց փոքր խախացոցը, կը լուան որչափ կարելի է մաքուր և կը չորցընեն: Վերջը այդ խախացոցը ծափի մի մէջ կը գնեն, հետը նաեւ չամիշ և կինամոնի, հոյ, շահոգրամի և դարալազեղի փոշի՝ իւրաքանչիւր համեմուքէն այլ քանի մի մըս. խալ, վրան ալ չափով մի ջուր կը լեցընեն ու բերանը փակ կը պահեն. այսպէս տասն օրէն պանրի դեղը պատրաստ կը լինի գործածութեան: Այն ատեն կաթը կը տաքցընեն և ապա մէջը համեմատաբար քանի մի դրգալ պանրի դեղ կը խառնեն, որով կը մակարդուի. յետոյ մակարդածը կտաւէ փոքր պարկերու մէջ լեցուցած՝ որ մի ամբողջ ծանրոցի տակ կը ճմիեն, որով ջրային մասը զտուելով՝ կը պնդանայ. ելածը սովորական

\* Հողէ աման՝ ինչպէս նաեւ բղուղ և ծափ:

գործածելի պանիրն է՝ առանց աղի, իսկ աղելու համար՝ եթէ կ'ուզեն՝ օր մի ամբողջ աղջուրի մէջ կը դնեն, վերջը կը չոր-ցընեն, և այսու գործողութիւնը կը վերջանայ, իսկ եթէ գորիս պանիր ըստածը ուզեն շինել, այն ատեն ելածը՝ առանց աղջու-րի մէջ դնելու կը մանրեն, վրան աղ կը ցանեն և այլեւայլ խոտերով կը համեմեն, վերջը ուժով մարդ մի՝ լայն բերնով բղուղներու մէջ կը քիսէ<sup>(\*)</sup>. ուրիշ մ'ալ մնացած երկու մատ տեղը՝ խոտով ծածկելով, կ'առնու բղուղները և կարգաւ սալ-քարերու վրայ գլխիվայր շրջելով՝ կը հողէ. և այսպէս քարի վրայ յեցած՝ թէ գերքը հաստատու կը պահէ, և թէ գետնի խոնաւութիւնը շատ չ'աւնուր, և միանգամայն շրջուն գիրքով կենալրով, գեռ մէջը մնացած ջրեղէն մասուր՝ վար ծորած մի-ջոց՝ անարգել խոտոյ ծակերէն գուրս կ'ենէ. բայց տեղ տեղ խոնաւութիւնը աւելի եւս խափանելու համար, բղուղները՝ թա-ղելու տեղ գետնի վրայ կը շարեն՝ նոյնպէս շրջուն ու սալքա-րից վրայ յեցած, և մինչեւ կէսը մնխրով կը ծածկեն, որ ջու-րըն ու խոնաւութիւնը շուտով մի իրեն քաշերով աւելի չոր կը պահէ: Բայց այսմ մի քանի ամիս սպասելով՝ պանիրը աշնան բոլորովին պատրաստ ու գործածական կը լինի: Շատ տեղեր և մասնաւորապէս թաթարներ, նախ կաթին սերը կը ժողովին և վերջը մնացածէն պանիր կը շինեն. բայց տեղայիք այսպէս պատրաստուած պանիր չեն հաւնիր, որովհետեւ չորնալէն վեր-ջը կաշւոյ կը նմանի և ախորժելի համ ալ չ'ունենար: Մակար-դած կաթը կատէ պարկերու մէջ ճնշած միջոց գուրս ծորած շիճուկը՝ քաղցր և թթու լորիկ շինելու կը գործածուի. քաղցր լորիկը շինելու համար՝ այն շիճուկի մէջ սակաւ մի թարմ կաթ կը խաւնեն և կը տաքցընեն կատէ անօթի մէջ, որ մակարդերով՝ գոնդողային քաղցրահամ ուտելիք մի կը լինի. նոյնպէս կը պատ-րաստեն նաեւ թթու լորիկն այլ, միայն թէ ասոր պատրաստու-թեան միջոց՝ թարմ կաթի հետ ջրախառն մածուն եւս կը խառ-նեն: Վերջինս նման վերոյիշեալ ժամանակին՝ այլեւայլ խոտոց հա-մեմիւք գետնի տակ կը թաղեն, բայց այն ատեն գրեթէ անոր հետ նոյնահամ կը լինի. ասոր համար շատ տեղ լրիկ կամ լոր ու ժամանակ՝ նոյնիմաստ բառեր են, Դարձեալ կաթէն կը պատրաստեն՝ աղողզ, բռչամա և սուշուիս: Եղբ ոչխարը կը ծը-նանի նոյն օր կը կծեն և ստացած մածուցիկ կաթին մէջ (որ խէծ կամ խիծ կը կոչուի) սակաւ մի թարմ կաթ խառներով կը տաքցընեն, ուսկից գոնդողային կերակուր մի կ'ենէ, զոր Հայք՝

\* Զետեղել սեղմելով ու գրեթէ զանգելով. (բառ ռամկ):

Դաշ, Քիւրտք՝ Փէրոյ և այլաղդիք կամ աւելի թաթարք՝ Աղորդ կ'անուանեն։ Բուլաման շատ նման է աղուզի, միայն թէ սա սակաւ մի աւելի հեղուկ է։ Իսկ սովուխն այսպէս կը շինեն։ ոչխարը ծնանելէն վերջը՝ կը վերցընեն անոր վրայէն այն մասը, որ՝ ինչպէս յայտնի է՝ նման է բազմաթաղանթ գործուածի, և զայն լուալով՝ մէջը խիժը կը լեցընեն և չերմ մոխրի տակ տաքցընելով՝ կը ստանան սովուխը, որ պանրանման քաղցրահամ թացան մ'է։

**ՄԵՂՈՒԱԴԱՐՄԱՆՈՒԹԻՒՆ.** — Այս ազատական զբաղանքը ընդհանրապէս լիռնային գիւղորէից յատկացած է, ուր թէ կիմայն և թէ բուսականութիւնը նպաստաւոր են մեղուադարման տանտիրոջ։ բայց սակայն գեռ եւս սպասուածին համեմատ տարածուած ու յառաջացած չէ։ Մեղուները բազմացընելու նախաջրհեղեղան դրութիւնն, և չկարենալ կամ սովորութիւն չունենալ պաշտպանելու զանոնք սաստիկ սառոյցներէն, և այն վերիվերոյ իննամբքը՝ յաճախ պատճառ կը լինին բազմաթիւ փեթակաց փճանարուն։ Տեղական փեթակները գլանաձեւ հիւսուած սապատներ են, գըրսէն կովու թրէփով ծեփուած, զորս պարտիզին մի անկիւնը կամ փոքր ու ցանկապատ տափերով վերայ պարկած դիբքով իրերաց վրայ կը շարեն։ — 1878 տարւոյն՝ Դարալազզի և Որդուատու վիճակաց մէջ՝ գրիթէ մեղուներու կէսը սատկեցաւ վասն զի փեթակաց մէջ տեսակ մի սպիտակ որդեր երեւցան, ըստ ոմանց թիթեռնիկի թրթուր կարծուած, որք միջի մեղքը կը սպառէին։ Միեւնոյն տարին այդ վիճակաց մէջ ես 9,051 փեթակ հաշուեցի, յորոց 6,204ը թաթարաց և էր 2,850ն Հայոց։ իւրաքանչիւր փեթակ տարին գրիթէ 15 փունտ մեղք կուտայ, հետեւապէս այդ վիճակները միջն հաշուով իրը 3,600 պուգ մեղք, որ 15,000 ըուրիէն աւելի արժէք ունի, մի պուգն 5 բուրլի համարելով<sup>(\*)</sup>։

**ԵՐԱՐՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ.** — ինչպէս որ մեղուաց դարմանն ու վաստակը գլխաւորապէս լիռնակողմանց վիճակուած էր, այսպէս ընդհակառակն չերամի խնամքն ու շահը՝ հովտաբնակաց առանձին յատկութիւն է համարուած։ ըստ այսմ յիշեալ վիճակաց զնստագոյն մասնց դրիթէ ամէն գիւղորէից մէջ ալ կը հանդիպիմք հարիւրատոր թթենեաց, զորս մասնաւորապէս շերամ պահելու համար տնկած են, նոցա պարտիզաց մէջ կը պատահին մերթ և դարեւոր թթեննիք, որոց կատարքն տարուէ տարի կտրած կը տեսնուին, և որոց տեսքն կը վկայէ թէ հօս

\* Սոյն հաշուիս մէջ մեղքամոմը բնաւ նկատի առնուած չէ։ Զէյդից։

շերամապահութիւնը՝ որով և մետաքսագործութիւն՝ վաղուց ի վեր մտած զբաղանք մ'է, բայց (զարմանք որ) տակաւին եւս անբարդաւաճ մնացած: Յայսմ մասին տեղացւոց բռնած ոճը բուն նահապետական է. կ'առնուն շերամի սերմերը, կը ծրարեն լաթի կտորի մի մէջ և այնպէս մի քանի օր անթի (թեւերնուն) տակ կապած կը պահեն. ուր մարմնոյ ջերմութենէն որդերը դուրս ենելով՝ անկէ թթենւոյ տերեւոց վրայ կը փոխադրեն, որը երկու անգամ կեր կու տան և բովանդակ որդնաբուծութեան ժամանակ՝ երեք անգամ անկողինը կը փոխեն: Շերամը կը պահեն կիսամութ ու խոնաւ սենեկաց մէջ, ուր յաճախ որդերն կը սատկին՝ մասամբ մի մաքուր օդոյ պակասութենէն և մասամբ այլ մրջիւններէն: Բոժոժներէն եկած մետաքսը՝ մեծաւ մասամբ տնական պիտոյից համար կը գործածուի, որովհետեւ եղածն ամենասակաւ է: Ներկայիս որ Նախիչեւանու և Որդուատու վիճակաց մէջ թթենւոյ ծառերը բազմացան, ըստ ինքեան մետաքսագործութիւնն պիտի կարենար գիւղա-տնտեսութեան միւս պարապմանց մէջ առաջին տեղը գրաւել. բայց գժբազգաբար որդանց հիւանդութիւնն՝ որ ամէն աշխարհաց մէջ եւս մետաքսագործութիւնը չարաչար հարուածեց, 1860ին սկիզբները հօս այլ թափանցեց, և այս պատճառաւ շատ շերամատեալը մետաքսագործութենէն բոլորովին ձեռքերնին ամփոփեցին: Այժմ շերամը Որդուատու վիճակին մէջ բաւական լաւ կը յաջողի, ուր ամէն տարի 1000 պուդ բոժոժ կը ստացուի, զորս տեղուոյն գործատանց մէջ թելի կը վերածեն: Տարուէ տարի ընդ ամէնն 15,000 բուբի մետաքս կու գայ. ուսկից 2000 ր. արժէքով քանակ մի տեղական կարեւորաց համար գործածելով, բոլոր մնացածը ագուլիսեցի վաճառականաց ձեռքով՝ դուրս վաճառքի կը տարուի:

ՀԱՀԱԲՈՒԽՈՒԹԻՒՆ. — Սա բնակչաց առանձին զբաղանք մի չիկազմեր, թէպէտ և ամէն տուն ալ առհասարակ ընտանի թըռչուն կը պահէ, որ ընդհանրապէս են՝ հաւ, հնդկահաւ, սագ և բագ, յորոց վերջին երկուքը հաղուագիւտներէն են, իսկ հընդհահաւը ասկէ 16 տարի առաջ մնած է հօս: Հաւերը մասնաւրապէս հաւկըթի համար կը գարմանեն, որ բնակչաց էական կերակուրն է. որոց համար ո՛ր և է ընտանի թոշնոյ միսը՝ ամենահամ և թանկ համադամ համարուած է:

**ԱՐԴ Ի ՄԻ ՔԵՐԵԼՈՎ՝ ԲՈՂՈՐ ՅԻշեալ (Նախիչեւանու, Դարալա-**

զըզի և Որդուաստու) վիճակաց սահմաններէն դուրս ի վաճառ տարուած՝ գիւղա-տնտեսութեան զանազան բերոց արժեցոյց թիւրը, այս տարեկան բոլորական հաշիւս կ'ունենանք. Յորեն՝ 5000 ըուրիի արժեքով, Բամբակ՝ 2000 ըուրիի, այլեւայլ չոր մրգեղէնք՝ 1,500 ըուրիի, Պանիր, եղ, մեղր և անասում՝ 25,000 ըուրիի. Մ'ետաքս՝ 18,000, Բուրդ և մորթ՝ 25,000 ըուրիի որով բովանդակ տարեկան դուրս տարուած վաճառքն կը լինի՝ իբր 74,500 ըուրիի.

Շարունակելի

## ԳԵՂԻ ՎԱՐԺՈՒՀԻՆ ԵՒ ԾԵՐ ԶԻՆՈՒԹՅՈՒՆ

**Գ**ԵՂԻՆ ուրիշ տներէն քիչ հեռու տնակի մը մէջ կը բընակէր ծեր զինուորը: Ստորին ու վերի յարկին մէկ մասը՝ վարձուորն ու ընտանիքը կը բնակէին, իսկ ծերունին իրեն պահած էր դէպ ի արևելք նայող անկեան երկու սենեակ, ուր աղքատաբար կ'ապրէր տանը չորս կողմը եղող պղտի հողին արդեամբքը, որ իր միակ կալուածն էր, ու ի պետութենէ՝ ի վարձ իր բազմամեայ զինուորական վաստակոց սահմանուած աննշան թոշակաւը:

Չոնէր ընտանիք, ոչ ազգական և ոչ բարեկամք, ոմնանք արդէն մեռեր, այլք հեռու և զինք բոլորովին մնոցած էին: Իր ցասկոտ և տխուր բնաւորութեանը, խիստ ու տմարդի կերպերուն վրայ՝ նոյն իսկ գիւղացիք կը փախչէին իրմէ. տեղույն բժժուին ու ժողովրդապետ քահանային ալ՝ ինք ծերունին չէր ուղեր մօտենալ. մէկուն՝ վասն զի չէր կրնար բժշկել ծերութեանն հիւանդութիւնները. միւսին՝ զի կը յլշեցընէր այնպիսի վարդապետութիւններ ու պարտք՝ զորս ինք արդէն ի վաղուց մնոցած էր, և չէր ուղեր որ յիշատակութիւննին նորոգուի սըրտին մէջ:

Այս պատճառաւ գրեթէ միշտ մինակ էր, կամ դաշտաց մէջ գաւազանի մը կոթնած յամբաքայլ շրջագայելով, և կամ դրան առջև արեւուն դիմաց նստելով՝ ծխափողը բերնին: Այդ միայնութիւն՝ ալ աւելի կը դառնացընէր և անհանդուրժելի կ'ընէր կեանքը ու ծերութեան հասակին անհրաժեշտ ցաւերն ու վշտերը զի գրեթէ իննանամեայ էր, և զինուորական կենաց սովորոցիք՝ այդ ծանրացեալ հասակին վրայ շատ նեղութիւններ աւելցուցեր էին: